

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ՎԱՀԱԳՆ ԿՈԼՅԱՅԻ

ՊԱՐՏԱՊԱՆԻ ԳՈՒՅՔԻ ՎՐԱ ԲՈՆԱԳԱՆՁՈՒՄ ՏԱՐԱԾԵԼԸ՝ ՈՐՊԵՍ
ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԻՋՈՑ

ԺԲ.00.04 – Դատական իրավունք (դատարանակազմություն,
քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն,
կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն,
օպերատիվ հետախուզական գործունեության տեսություն)
մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան-2014

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ДАЛЛАКЯН ВААГН НИКОЛАЕВИЧ

ОБРАЩЕНИЕ ВЗЫСКАНИЯ НА ИМУЩЕСТВО ДОЛЖНИКА, КАК МЕРА
ПРИНУДИТЕЛЬНОГО ИСПОЛНЕНИЯ СУДЕБНЫХ АКТОВ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук
по специальности 12.00.04 – Судебное право (судоустройство, гражданский
процесс, уголовный процесс, криминалистика, судебная экспертиза, адвокатура,
теория оперативно-розыскной деятельности)

Ереван-2014

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական
համալսարանում

Գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների թեկնածու,
դոցենտ Վ. Վ. Հովհաննիսյան
Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավաբանական գիտությունների դոկտոր,
դոցենտ Վ. Ա. Գուրեն
իրավաբանական գիտությունների թեկնածու
Վ. Ս. Բեժանյան

Առաջատար կազմակերպություն՝ Հայ-ռուսական (սլավոնական) համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է դեկտեմբերի 19-ին՝ ժամը
14³⁰-ին, Երևանի պետական համալսարանում գործող ԲՈՀ-ի իրավագիտության
001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի
գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքված է նոյեմբերի 18-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար
իրավ. գիտությունների դոկտոր, դոցենտ

Վ. Դ. Ավետիսյան

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете

Научный руководитель: кандидат юридических наук,
доцент В. В. Оганесян

Официальные оппоненты: доктор юридических наук, доцент В. А. Гуреев
кандидат юридических наук
В. С. Бежанян

Ведущая организация: Российско-Армянский (Славянский) университет

Защита состоится 19-ого декабря в 14³⁰ часов на заседании Специализированного
совета ВАК 001 по юриспруденции при Ереванском государственном университете
(0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников
библиотеки ЕГУ.

Автореферат разослан 18-ого ноября 2014 года.

Ученый секретарь специализированного совета,
доктор юридических наук, доцент

В. Д. Аветисян

Ատենախոսության ընդհանուր բնութագիրը

Հետազոտության թեմայի արդիականությունը: Դատական ակտերի հարկադիր կատարման արդյունավետ կառուցակարգն անձանց իրավունքների պաշտպանության օղակներից է, որի պատշաճ գործողության ապահովումը պետության պարտականությունն է: Ընդ որում, սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության շղթայում հարկադիր կատարման օղակն ունի համակարգային նշանակություն, քանի որ դրա թերի գործառման պարագայում ակնհայտորեն կնվազի իրավունքների պաշտպանության գրեթե բոլոր ձևերի արդյունավետությունը: Դատական ակտերի հարկադիր կատարման գործուն կառուցակարգը կոչված է ապահովելու պարտատիրոջ այնպիսի իրավունքներ, ինչպիսիք են իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը, արդար դատաքննության իրավունքը, իսկ գույքային պահանջների դեպքում՝ նաև սեփականության պաշտպանության իրավունքը: Միաժամանակ, դատական ակտերի հարկադիր կատարման ընթացակարգը խստորեն պետք է համապատասխանի նաև պարտապանի իրավունքների պաշտպանության չափանիշներին:

Չնայած իրավական ողջ համակարգի համար դատական ակտերի հարկադիր կատարման այսպիսի համակարգային և կարևոր նշանակությանը՝ 1998թ. «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ ԴԱՀԿ մասին ՀՀ օրենք) ընդունումից ի վեր այս ոլորտը Հայաստանում մեծ հաշվով դուրս է մնացել ինչպես տեսական հետազոտությունների, այնպես էլ՝ օրենսդրական քաղաքականության ուշադրությունից: Տեսական ուսումնասիրությունների արդյունքները սահմանափակվել են հիմնականում դասագրքային նյութերով, սակավաթիվ գիտական հոդվածներով և առավելապես օրենքի մեկնաբանմանն ուղղված նյութերով: Ունենալով մի շարք թերություններ և բացեր՝ ԴԱՀԿ մասին ՀՀ օրենքն ընդունումից հետո մինչ օրս դուրս է մնացել նաև դատաիրավական ակտիվ բարեփոխումներից. օրենքում կատարված փոփոխությունները կամ կրել են հատվածական բնույթ, կամ ածանցյալ են եղել փոխկապակցված այլ օրենքներում կատարված փոփոխություններից: Արդյունքում, օրենքի կիրառության ընթացքում կուտակված և օրենսդրական լուծում պահանջող հարցերի մեծամասնությունը մնացել է չլուծված: Նման իրավիճակի հիմնական պատճառներից մեկն էլ, հեղինակի կարծիքով, տեսական անհրաժեշտ հենքի բացակայությունն է:

Ընդ որում, նկատի ունենալով, որ դատական ակտերի հարկադիր կատարման մասին գործող օրենսդրությունն ընդունվել է սեփականության բազմաձևությանը և շուկայական տնտեսավարմանն անցման պայմաններում, առավել մեծ արդիականություն է ձեռք բերում իրավունքի սուբյեկտների սեփականության իրավունքին և տնտեսական գործունեությանն առնչվող՝

հարկադիր կատարման այնպիսի միջոցի հետազոտությունը, ինչպիսին է պարտապանի դրամական պարտավորություններով նրա գույքի վրա բռնագանձում տարածելը: Հայրենական տեսության, օրենսդրության և պրակտիկայի կողմից բավականաչափ ընկալված չեն, մասնավորապես, դատական ակտերի հարկադիր կատարման միջոցների կիրառման ընդհանուր պայմաններին, հարկադրանքի սահմաններին, պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելու ընթացքում բռնագանձվող գույքի առնչությամբ և կողմերի համար ծագող նյութաիրավական հետևանքներին, արգելադրված գույքի իրացման կապակցությամբ պահանջատիրոջ, պարտապանի և այլ շահագրգիռ անձանց իրավունքների պաշտպանության միջոցներին, պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելիս նրա տնտեսական գործունեության պաշտպանությանն առնչվող հարցերը:

Հետազոտության թեմայի մշակվածության աստիճանը: ԴԱՀԿ մասին օրենքի ընդունումից ի վեր Հայաստանում կատարողական վարույթի վերաբերյալ կատարված ուսումնասիրություններից հարկ է հիշատակել Ա. Ավագյանի «Կատարողական վարույթի ձևավորման և զարգացման տեսական-կիրառական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» («Հայգիտակ», Եր., 2005) մենագրությունը, որն առավելապես պատմական ուսումնասիրություն և գործնական մեկնաբանություն է ներկայացնում: Նույն հեղինակի կողմից հրապարակվել են նաև կատարողական վարույթի հարցերին առնչվող որոշ գիտական հոդվածներ, որոնք չեն վերաբերում սույն հետազոտության առավել նեղ թեմային: Հարկ է հիշատակել նաև պրոֆեսոր Ռ. Պետրոսյանի հեղինակությամբ հրապարակված «Հայաստանի քաղաքացիական դատավարություն» դասագրքի (օրինակ, երրորդ հրատարակությունը՝ Եր., Երևանի համալսարանի հրատ., 2007) մասին, որում, սակայն, կատարողական վարույթին առնչվող հարցերը ներկայացվում են իրենց ամբողջության մեջ՝ դասագրքային ծավալի և ձևաչափի պայմաններում: Սույն հետազոտության թեմայի վերաբերյալ այլ՝ գիտական ուսումնասիրություններ դեռևս չեն հրապարակվել:

Սակայն իրավական որոշ կարգավորումների, ինչպես նաև տեսական հարցերի ընդհանրությունը հաշվի առնելով՝ պետք է հիշատակել նաև խորհրդային և հետխորհրդային իրավագետների կատարած հետազոտությունների մասին: Մասնավորապես, սույն հետազոտության թեմային վերաբերող տարբեր հարցերի շուրջ արժեքավոր աշխատությունների հեղինակներ են Մ. Ա. Գուրվիչը, Ն. Բ. Ջեյդերը, Ե. Գ. Նատախինան, Ն. Վ. Կուրակովան, Կ. Ի. Սկլովսկին, Օ. Ա. Բեյլսան, Ե. Կ. Կոստյուշինը: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ դատական ակտերի հարկադիր կատարման և մասնավորապես՝ պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելու թեմայով խորհրդային և հետխորհրդային իրավագետների կատարած հետազոտությունները հետազոտության օբյեկտը

դիտարկում են առավելապես դատավարական (պրոցեսուալ) հարաբերությունների պրիզմայով, այնինչ քննարկվող իրավահարաբերություններին առնչվող հարցերն ամբողջության մեջ ընկալելու համար անհրաժեշտ է նաև նյութաիրավական մոտեցում, ինչն էլ հեղինակը փորձել է իրականացնել սույն հետազոտության շրջանակներում:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելու հետ կապված հասարակական հարաբերություններն են: Ընդ որում, հետազոտության օբյեկտում չեն ընդգրկվում երրորդ անձի մոտ գտնվող՝ պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելու հետ կապված հասարակական հարաբերությունները, քանի որ, նախ, դա հարկադիր կատարման առանձին միջոց է, բացի այդ, կապված է այնպիսի ինստիտուտի հետ, ինչպիսին է պարտապանի գույքի նկատմամբ երրորդ անձի տիրապետման պաշտպանությունը: Ըստ այդմ՝ նշված հարաբերություններն առանձին հետազոտության օբյեկտ են ներկայացնում:

Հետազոտության առարկան այն իրավական նորմերն են, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն կարգավորում են պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելու հետ կապված հասարակական հարաբերությունները: Հետազոտության առարկայի մեջ չեն ընդգրկվել գույքի և եկամուտների առանձին տեսակների վրա բռնագանձում տարածելու կանոնները: Պատճառն այն է, որ նշված կանոններն ածանցյալ են գույքի և եկամուտների յուրաքանչյուր տեսակի իրավական ռեժիմը սահմանող իրավական նորմերից, հետևաբար՝ գույքի և եկամուտների յուրաքանչյուր տեսակի վրա բռնագանձում տարածելու հետազոտությունն առաջին հերթին պահանջում է դրա իրավական ռեժիմը սահմանող իրավական նորմերի հետազոտություն: Ակնհայտ է, որ մեկ աստենախոսության շրջանակներում գույքի և եկամուտների բոլոր տեսակների վրա բռնագանձում տարածելու կանոնների նման հետազոտությունը ոչ միայն անհարկի ծավալուն կամ մակերեսային կդարձներ այն, այլև կխաթարեր հետազոտության համակարգային ամբողջականությունը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակը պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելու ընթացքում բռնագանձվող գույքի նկատմամբ առաջացող նյութաիրավական հետևանքների, պարտապանի, պահանջատիրոջ, ինչպես նաև այլ շահագրգիռ անձանց մոտ ծագող իրավունքների և պարտականությունների բացահայտումն է: Դա թույլ կտա, մի կողմից, ճիշտ հասկանալ և կիրառել պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելուն առնչվող իրավական նորմերը, մյուս կողմից տեսական հիմք կստեղծի կատարելագործելու համար գործող կանոնները՝ շահագրգիռ անձանց իրավունքների համակողմանի և ամբողջական պաշտպանության նկատառումներով:

Նշված նպատակն իրագործելու համար դրվել և հետազոտության ընթացքում լուծվել են հետևյալ խնդիրները.

1. հետազոտել դատական ակտերի հարկադիր կատարման բոլոր միջոցներին բնորոշ ընդհանուր հատկանիշները, կիրառման պայմանները, հարկադրանքի սահմանները,

2. վեր հանել պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելու նյութաիրավական հիմքերը,

3. վերլուծել պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելու ընթացակարգը՝ հարկադիր կատարման նշված միջոցը կազմող կատարողական գործողությունների համակցության, կիրառման պարտադիր կամ ֆակուլտատիվ լինելու և կիրառման հերթականության տեսանկյուններից,

4. որոշել պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելը կազմող յուրաքանչյուր կատարողական գործողության կիրառման արդյունքում պարտապանի համար ծագող սահմանափակումների ծավալը,

5. որոշել պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելու ընթացքում բռնագանձվող գույքի նկատմամբ պահանջատիրոջ իրավական իշխանության բնույթը,

6. հետազոտել արգելադրված գույքի իրացման կառուցակարգերի նյութաիրավական կողմը և այդ համատեքստում շահագրգիռ անձանց իրավունքների պաշտպանության հարցերը,

7. դիտարկել պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելու առանձնահատկություններն ըստ պարտապանների՝ ինչպես պահանջատիրոջ պահանջի իրավունքի, այնպես էլ պարտապանների իրավունքների պաշտպանության տեսանկյուններից:

Հետազոտության տեսական հիմքերը: Հետազոտությունն իրականացնելիս հեղինակը հիմնվել է իրավագիտության այնպիսի ճյուղերի ձեռքբերումների վրա, ինչպիսիք են սահմանադրական իրավունքի գիտությունը, քաղաքացիական իրավունքի գիտությունը, քաղաքացիական դատավարության իրավունքի գիտությունը, վարչական իրավունքի գիտությունը:

Հետազոտության անցկացման ընթացքի և դրա հիմնական դրույթների ձևավորման հարցում առավել մեծ նշանակություն են ունեցել Ռուսաստանի ցարական շրջանի իրավագետներ Ե. Վ. Վասկովսկու, Ի. Ե. Էնգելմանի, ֆրանսիացի քաղաքացիագետ Լ. Ժ. Մորանդյերի, խորհրդային և հետխորհրդային իրավագետներ Վ. Ա. Ռյազանովսկու, Ս. Ա. Իվանովայի, Մ. Գ. Ավդյուկովի, Ա. Կ. Սերգունի, Ն. Ս. Դյուրազինի, Մ. Ա. Գուրվիչի, Ս. Ն. Աբրամովի, Դ. Ի. Պոլունորովինովի, Ն. Բ. Ջեյդերի, Պ. Պ. Ջավորոտկոյի, Ե. Գ. Նատախինայի, Ն. Վ. Կուրակովայի, Ա. Պ. Ցիբուլենկոյի, Վ. Ա. Տարխովի, Լ. Ի. Ղազիյանցի, Կ. Ի. Սկլովսկու, Ի. Մ. Վստավսկայայի, Ս. Ա. Սավչենկոյի, Օ. Ա.

Բեյասայի, Ե. Ա. Սուխանովի, Վ. Վ. Յարկովի, Ե. Կ. Կոստյուշինի, հայրենական իրավագետներից՝ Տ. Բարսեղյանի, Գ. Հարությունյանի աշխատությունները:

Հետազոտության նորմատիվ հիմքն են ՀՀ Սահմանադրությունը, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան, ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, ԴԱՀԿ մասին ՀՀ օրենքը, մի շարք այլ նորմատիվ իրավական ակտեր:

Հետազոտության փորձառնական (եմպիրիկ) հիմքն են կազմել ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության իրավակիրառական պրակտիկան, ՀՀ վճռաբեկ դատարանի, ՀՀ վարչական դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկան:

Հետազոտության մեթոդաբանությունը: Հետազոտությունն իրականացնելիս լայնորեն օգտագործվել է համակարգակառուցվածքային մեթոդը: Հարկադիր կատարման միջոցները դիտարկվել է պարտավորությունների կատարման քաղաքացիաիրավական ընկալման շրջանակներում, պարտապանի սեփականության իրավունքի սահմանափակումը՝ քաղաքացիաիրավական պարտավորությունից բխող՝ պարտապանի գույքի նկատմամբ պարտատիրոջ իշխանության շրջանակներում, արգելադրված գույքի իրացումը՝ սակարկությունների քաղաքացիաիրավական ինստիտուտի շրջանակներում և այլն: Մեծ տեղ է հատկացվել նաև մոդելավորման մեթոդի կիրառմանը, ինչի շնորհիվ կարևոր եզրահանգումներ են արվել, մասնավորապես, պարտապանի գույքն արգելադրելիս տնօրինման անվերապահ արգելքի արդարացված չլինելու, պարտապան իրավաբանական անձանց դրամական միջոցների առաջնահերթ ամբողջական արգելադրման անհամաչափ լինելու, շրջանառության մեջ գտնվող ապրանքների արգելանքի անհրաժեշտության և այլ հարցերում:

Իհարկե, բացի վերը նշված մեթոդներից, հետազոտությունը հիմնված է այնպիսի համընդհանուր մեթոդների կիրառման վրա, ինչպիսիք են դիալեկտիկական, տրամաբանական, պատմական, համեմատական հետազոտության մեթոդները:

Ատենախոսության գիտական նորույթը. պաշտպանության ներկայացվող դրույթները: Ատենախոսությունը հայրենական իրավագիտությունում պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելու խնդիրների առաջին համակարգային հետազոտությունն է: Ընդ որում, հարկադիր կատարման նշված միջոցի կիրառման ընթացակարգային ինստիտուտն ուսումնասիրվել է նյութաիրավական տեսանկյունից: Ձևակերպվել է հարկադիր կատարման միջոցների ընդհանուր հատկանիշների, կիրառման պայմանների և հարկադրանքի սահմանների կախվածությունը նյութաիրավական

պարտավորությունից, տրվել են պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելու նյութաիրավական հիմքերը: Առաջադրվել են արգելանքի իրային-իրավական հատկանիշների, ապագայում ձեռք բերվող գույքի արգելանքի, շրջանառության մեջ գտնվող գույքի արգելանքի գաղափարները: Տրվել են հարկադիր աճուրդի անվավերության հիմքերն ու հետևանքները: Մշակվել են կատարողական վարույթի ընթացքում պարտապան իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի գործունեությունը հնարավորինս պակաս խոչընդոտելու եղանակներ:

Հետազոտության արդյունքում պաշտպանության են ներկայացվում հետևյալ դրույթները.

1. Դատական ակտերի հարկադիր կատարման միջոցները պարտապանի և (կամ) նրա գույքի նկատմամբ կիրառվող իրավական ներգործության այն միջոցներն են, որոնք անմիջականորեն ուղղված են դատական ակտով սահմանված պարտավորության կատարմանը՝ պարտապանի կամքին հակառակ կամ առանց այդ կամքը հաշվի առնելու, նյութաիրավական պարտավորության էությունից բխող եղանակներով: Հարկադիր կատարման միջոցներ չեն և իրավաբանորեն անթույլատրելի են տեսության մեջ առաջարկվող և տարբեր ժամանակներում և իրավական համակարգերում կիրառված և կիրառվող՝ պարտապանի նկատմամբ գործադրվող այն միջոցները, որոնք անմիջականորեն ուղղված չեն պարտավորության կատարմանը, այլ միայն պարտապանին որոշակի գրկանքներ պատճառելու միջոցով ստիպում են նրան ինքնուրույն կատարել պարտավորությունը: Նման միջոցներն անթույլատրելի են, քանի որ չունեն նյութաիրավական հիմք, և դրանց կիրառման դեպքում պարտապանը գրկանքներ է կրում առանց որևէ իրավախախտում թույլ տալու:

Հարկադիր կատարման բոլոր միջոցներին բնորոշ են նաև կիրառման ընդհանուր պայմանները, որոնց թվում առաջարկվում է օրենսդրորեն ամրագրել պարտավորության կատարման ժամկետը լրացած լինելը: Կատարման ժամկետի ընթացքում պետք է արգելվի կատարողական վարույթի հարուցումը, իսկ արդեն կատարողական վարույթի հարուցումից հետո պարտապանին կամավոր կատարման ժամկետ տրամադրելն իմաստագուրկ է: ՀՀ դատավարական օրենսդրությունը չի նախատեսում վճռի կատարման ժամկետ կամ դատարանի կողմից այդպիսի ժամկետ սահմանելու պահանջ, ինչը դատավարական օրենսդրության լուրջ բաց է:

2. Բռնագանձումը պարտապանի գույքի վրա տարածելու նյութաիրավական հիմքը դրամական պարտավորություններով պարտատիրոջ ընդհանուր գրավի իրավունքն է պարտապանի գույքի նկատմամբ: Թեև այդ եզրույթը ՀՀ քաղաքացիական օրենսգրքին (այսուհետ՝ ՀՀ քաղ. օր.) ծանոթ չէ, սակայն նշված իրավունքն արտահայտվում է օրենսգրքի այն դրույթներում, որոնք սահմանում են քաղաքացիական

իրավունքի սուբյեկտների գույքային պատասխանատվությունը, ինչպես նաև թույլատրում են սեփականատիրոջ պարտավորություններով նրա գույքի վրա բռնագանձում տարածելու միջոցով դադարեցնել սեփականության իրավունքը: Ընդհանուր գրավը, լինելով ոչ թե իրային, այլ մաքուր պարտավորական իրավունք, պարտատիրոջն իրավունք է տալիս իր պահանջի բավարարում ստանալ պարտապանի՝ պահանջի բավարարման պահին առկա ողջ գույքից (բացի այն գույքից, որի վրա օրենքով չի թույլատրվում բռնագանձում տարածել):

3. Պարտապանի գույքի արգելադրման պահից արգելադրված գույքի նկատմամբ պահանջատիրոջ իշխանությունը ձեռք է բերում որոշակի հստակ իրային-իրավական հատկանիշներ: Ելնելով այդ հատկանիշներից՝ «հետևելու» իրավունքի անալոգիայով, առաջարկվում է օրենքով ամրագրել, որ արգելադրված գույքի ապօրինի օտարման դեպքում արգելանքը պահպանվում է, և արգելադրված գույքը կարող է առգրավվել և հարկադիր իրացվել: Առաջարկվում է սահմանել նաև պարտապանի և պահանջատիրոջ (պահանջատերերի) համաձայնությամբ արգելանքի վերացման հնարավորությունը:

4. Անհրաժեշտ է օրենսդրորեն ամրագրել ապագայում ձեռք բերվելիք գույքի նկատմամբ արգելանք կիրառելու հնարավորությունը, որի դեպքում արգելանքն ուժի մեջ կմտնի պարտապանի կողմից գույքը ձեռք բերելու պահից: Այդ նպատակով պարտապանի վրա պետք է հետագայում ձեռք բերվող գույքը հայտարարագրելու պարտականություն դրվի, ինչն ապահովված պետք է լինի օրենքով սահմանված պատասխանատվությամբ: Բացի այդ, պարտապանի գույքի վերաբերյալ կատարվող հարցումները պետք է ներառեն նաև հետագայում ձեռք բերվող գույքի մասին հայտնելու պահանջ:

5. ԴԱՀԿ մասին ՀՀ օրենքով սահմանված՝ արգելադրված գույքի ուղղակի վաճառքի ընթացակարգն իրենից ըստ էության ներկայացնում է փակ աճուրդ, ուստի առաջարկվում է այն կարգավորել փակ աճուրդի կանոններով, այլապես շահագրգիռ անձինք դրա անցկացման կարգի խախտումներից արդյունավետ իրավական պաշտպանություն, մասնավորապես՝ վաճառքն անվավեր ճանաչելու հնարավորություն չեն ստանում: Նույն կերպ, շահագրգիռ անձինք այդպիսի հնարավորություն չունեն նաև չիրացված գույքն օրենքի խախտմամբ պարտքի դիմաց պահանջատիրոջը հանձնելու դեպքում, ուստի առաջարկվում է վերացնել այդ ինստիտուտը՝ դրա փոխարեն միակ կամ առաջնահերթ պահանջատիրոջը հնարավորություն վերապահելով մասնակցելու աճուրդին՝ գույքի դիմաց վճարելով ոչ միայն դրամով, այլ նաև իր պահանջի հաշվանցով:

6. ՀՀ օրենսդրությունը մակերեսային է կարգավորում հարկադիր (էլեկտրոնային) աճուրդների անվավերության հիմքերը և հատկապես՝

հետևանքները: Տեսական հետազոտությունները, սակայն, հանգեցնում են հետևյալ դրույթներին:

Հարկադիր աճուրդներն անվավեր են ճանաչվում գործարքների անվավերության կանոններով: Աճուրդի անվավերության հայց կարող է ներկայացնել շահագրգիռ այն անձը, որի իրավունքները և օրինական շահերը խախտվել են աճուրդի անցկացման կանոնների խախտման հետևանքով: Հայցվորի իրավունքների խախտում առկա է նաև այն դեպքում, երբ թեկուզ այլ անձանց (օրինակ, հարկադիր կատարողի և աճուրդում հաղթած մասնակցի) իրավահարաբերություններում աճուրդի անցկացման կարգի խախտումը հայցվորի համար առաջացրել է անբարենպաստ հետևանքներ: Աճուրդի անվավերության հիմք պետք է համարվի նաև երկրորդ և յուրաքանչյուր հաջորդ աճուրդին անցնելու կանոնների խախտումը, ինչն օրենքով նախատեսված չէ: Իսկ հարկադիր աճուրդին նախորդող խախտումների հիմքով աճուրդն անվավեր կարող է ճանաչվել միայն աճուրդին նախորդող և այն պայմանավորող վարչական ակտը վարչական ակտերի վիճարկման կանոններով անվավեր ճանաչվելու դեպքում՝ որպես այդպիսի անվավերության հետևանք:

Աճուրդի անվավերության հետևանքներն են առուվաճառքի պայմանագրի անվավերությունը և մինչև աճուրդը եղած դրության վերականգնումը: Մասնավորապես, տեղի է ունենում երկկողմանի ռեստիտուցիա հարկադիր կատարողի և գնորդի միջև, պարտապանի սեփականությանը վերադարձված գույքի նկատմամբ վերականգնվում է արգելանքը, անվավեր են ճանաչվում աճուրդից բխող բոլոր վարչական ակտերը, այդ թվում՝ իրացումից ստացված գումարների բաշխումը, բաշխված գումարները վերադարձվում են, իսկ հարկադիր կատարված և ըստ այդմ՝ դադարած պահանջը վերականգնվում է և կրկին ենթակա է լինում հարկադիր կատարման:

7. Պարտապան իրավաբանական անձանց ամբողջ դրամական միջոցների անվերապահ առաջնահերթ բռնագանձումը և պարտապանի շրջանառու միջոցների բռնագանձումը կարգավորող կանոններն անհամաչափորեն լուրջ խնդիրներ են առաջացնում պարտապան իրավաբանական անձանց գործունեության շարունակականության և ընթացիկ պարտավորությունների կատարման համար: Խնդիրն առավել մեծ սրություն է ստանում, երբ արգելանքի և իրացման (արգելադրված գումարների բռնագանձման) միջև ժամանակամիջոցը տևական է լինում:

Խնդրի լուծման նպատակով առաջարկվում են հետևյալ հայեցակարգային օրենսդրական փոփոխությունները. ա) առաջնահերթ բռնագանձման ենթակա համարել պարտապան իրավաբանական անձի դրամական միջոցների միայն մի մասը, բ) միայն այն դեպքում, երբ պարտապան իրավաբանական անձը չունի որևէ այլ գույք, բռնագանձում տարածել (արգելանք դնել) իրավաբանական անձի ամբողջ դրամական միջոցների վրա, գ)

շրջանառության մեջ գտնվող ապրանքների գրավի (ՀՀ քաղ. օր., հոդված 259) անալոգիայով կատարողական վարույթում ներդնել նոր ինստիտուտ՝ պարտապան իրավաբանական անձին պատկանող՝ շրջանառության մեջ գտնվող ապրանքների արգելանք:

8. Հաշվի առնելով անհատ ձեռնարկատիրոջ կարգավիճակի երկվությունը՝ գործարարական գույքի նկատմամբ անձնական գույքի առավել բարձր պաշտպանվածության սկզբունքի վրա առաջարկվում է սահմանել պարտապան անհատ ձեռնարկատիրոջ գույքի վրա բռնագանձում տարածելու հատուկ հերթականություն. (դրամական միջոցներից հետո). ա) արտադրության մեջ անմիջականորեն չներգրավված շարժական գույք (բացառությամբ անձնական և ընտանեկան նպատակներով օգտագործվող գույքի), բ) արտադրության մեջ անմիջականորեն չներգրավված անշարժ գույք (բացառությամբ անձնական և ընտանեկան նպատակներով օգտագործվող գույքի), գ) պատրաստի արտադրանք, դ) անավարտ արտադրանք, այդ թվում՝ հումք, նյութեր, կիսաֆաբրիկատներ, ե) արտադրության մեջ ներգրավված այլ գույք, զ) անձնական կամ ընտանեկան նպատակներով օգտագործվող շարժական գույք, է) անձնական կամ ընտանեկան նպատակներով օգտագործվող անշարժ գույք:

Միաժամանակ, իրավաբանական անձանց դրամական միջոցների բռնագանձմանը և շրջանառության մեջ գտնվող ապրանքների արգելանքին առնչվող՝ վերևում արված առաջարկները հավասարապես վերաբերելի կարող են դիտվել նաև պարտապան անհատ ձեռնարկատիրոջ պարագայում:

9. Հայաստանի Հանրապետության դրամական պարտավորությունների կատարման կարգը, ի խախտումն պարտատերերի սեփականության պաշտպանության, արդար դատաքննության իրավունքների և խտրականության սահմանադրական արգելքի, նախատեսում է որոշ, հեղինակի կարծիքով, հակասահմանադրական դրույթներ, մասնավորապես. ա) պետության պարտավորության կատարման նախաձեռնությունը պետության փոխարեն դրվում է պահանջատիրոջ վրա, բ) պահանջատիրոջից առանց անհրաժեշտության պահանջվում է սկսել հարկադիր կատարման ընթացակարգ, գ) վերը նշված երկու իրողությունների հետևանքով մինչև փոխանցելի մուրհակ տրամադրելու օրը պետության դրամական պարտավորության կատարման կետանցի համար պարտավորության գումարի նկատմամբ որևէ տոկոս չի հաշվարկվում, դ) փոխանցելի մուրհակ տրամադրելու օրվանից մինչև դրա մարման օրը պարտավորության գումարի նկատմամբ հաշվարկվում են պարտապանի համար արտոնյալ տոկոսներ, ե) չի ապահովվում պարտավորության կատարման ողջամիտ ժամկետ:

Նշված խնդիրների լուծման նպատակով առաջարկվում է. ա) սահմանել պետական իրավասու մարմնի պարտականությունը՝ սեփական նախաձեռնությամբ ex-officio կատարելու օրինական ուժի մեջ մտած դատական ակտը, բ) բացառել կատարողական վարույթի հարուցումը՝ որպես

դրամական պարտավորության կատարման պարտադիր նախապայման, ինչը, միաժամանակ, չպետք է բացառի չկատարման դեպքում հարկադիր կատարման հնարավորությունը, գ) պետության դրամական պարտավորության կատարման կետանցի համար սահմանել ՀՀ քաղ. օր. 411 հոդվածի կիրառելիությունը, դ) յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի հաշվին առանձնացնել ֆոնդ բացառապես դատական ակտերով նախատեսված դրամական պարտավորությունների կատարման նպատակի համար, և հարկադիր կատարողին վերապահել սահմանված ժամկետում դատական ակտը չկատարվելու դեպքում պահանջատիրոջ դիմումի հիման վրա այդ ֆոնդի միջոցների վրա բռնագանձում տարածելու լիազորություն:

Ատենախոսության տեսական նշանակությունը: Ատենախոսությունը կարող է կարևոր նշանակություն ունենալ ընթացակարգային ինստիտուտի՝ կատարողական վարույթի շրջանակներում պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելու համակարգային (նաև նյութաիրավական) ընկալման տեսանկյունից: Ատենախոսությունում արված եզրահանգումները և առաջ քաշված գաղափարները կարող են նաև նպաստել Հայաստանում կատարողական վարույթին առնչվող այլ հետազոտությունների անցկացմանը և կատարողական իրավունքի գիտության զարգացմանը:

Ատենախոսության գործնական նշանակությունը: Հետազոտությունում արված դատողություններն ու եզրահանգումները կարող են օգտակար լինել իրավակիրառողների և պրակտիկ իրավաբանությամբ զբաղվողների կողմից համապատասխան իրավական նորմերի ճիշտ ընկալման և կիրառման համար: Բացի այդ, հետազոտության եզրահանգումները կարող են պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելու օրենսդրական կարգավորման բարեփոխումների հիմք դառնալ:

Հետազոտության արդյունքների փորձարկումը: Ատենախոսությունը պատրաստվել է Երևանի պետական համալսարանի քաղաքացիական դատավարության ամբիոնում, որտեղ և քննարկվել է: Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացվել են հրապարակված չորս գիտական հոդվածներում: Ատենախոսության որոշ դրույթներ քննարկվել են Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի սասիրանտների և հայցորդների 2013թ. նստաշրջանում և 2014թ. մարտի 27-28-ին կայացած՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի 20-ամյակին նվիրված «Պետական կառավարման արդյունավետության ապահովման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» խորագրով միջբուհական գիտաժողովում:

Ատենախոսության ծավալը և կառուցվածքը: Ատենախոսությունը կազմված է ՀՀ ԲՈՀ-ի սահմանած ծավալով և կազմված է ներածությունից, երեք գլուխներից, որոնք ներառում են վեց պարագրաֆներ, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Ատենախոսության համառոտ բովանդակությունը

Ներածության մեջ հիմնավորվում է հետազոտության թեմայի արդիականությունը, ներկայացվում են մշակվածության աստիճանը, հետազոտության տեսական, նորմատիվ, փորձառնական հիմքերը, մեթոդաբանությունը, հետազոտության օբյեկտը և առարկան, նպատակը և խնդիրները, գիտական նորույթը, ձևակերպվում են պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, ներկայացվում են հետազոտության տեսական և գործնական նշանակությունը և հետազոտության արդյունքների փորձարկումը:

Առաջին գլուխը՝ «Պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելու՝ որպես հարկադիր կատարման միջոցի իրավաբանական էությունը» վերտառությամբ, կազմված է երկու պարագրաֆից, որոնք վերաբերում են հարկադիր կատարման միջոցների ընդհանուր իրավաբանական էության բացահայտմանը և պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելու էության և նյութաիրավական հիմքերի վերհանմանը:

Առաջին գլխի առաջին պարագրաֆը՝ «Հարկադիր կատարման միջոցների ընդհանուր իրավաբանական էությունը» վերտառությամբ, նվիրված է դատական ակտերի հարկադիր կատարման բոլոր միջոցների ընդհանուր էության և ընդհանուր հատկանիշների վերհանմանը: Նշվում է, որ դատական ակտի հարկադիր կատարումը շարունակում է լինել պարտավորության կատարում, հետևաբար՝ դատական ակտը կամավոր չկատարելու միակ հետևանքը կարող է լինել դրա կատարումը հարկադրաբար՝ դատական ակտի կատարելիության հատկանիշի ուժով: Իսկ հարկադրանքի կիրառումն իր հերթին պետք է սահմանափակվի միայն նյութաիրավական պարտավորությունից բխող կատարման եղանակները հարկադրաբար՝ պարտապանի կամքին հակառակ կամ առանց այդ կամքը հաշվի առնելու իրականացնելուն: Հետևաբար, հարկադիր կատարման միջոցներ չեն և իրավաբանորեն անթույլատրելի են պարտապանի նկատմամբ գործադրվող այն միջոցները, որոնք անմիջականորեն ուղղված չեն պարտավորության կատարմանը, այլ միայն պարտապանին որոշակի զրկանքներ պատճառելու միջոցով ստիպում են նրան ինքնուրույն կատարել պարտավորությունը: Այդպիսի միջոցների կիրառման դեպքում պարտապանը, փաստորեն, զրկանքներ է կրում առանց որևէ իրավախախտում թույլ տալու:

Վեր են հանվում հարկադիր կատարման բոլոր միջոցներին բնորոշ՝ կիրառման ընդհանուր պայմանները: Նշվում է, որ դատական ակտով սահմանված պարտավորությունը, ինչպես ցանկացած նյութաիրավական պարտավորություն, պետք է ունենա կատարման ժամկետ, և միայն այդ ժամկետը լրանալուց հետո պետք է թույլատրվի կատարողական վարույթի

հարուցումը և հարկադիր կատարման միջոցների կիրառումը: Այնինչ, ՀՀ դատավարական օրենսդրությունը չի նախատեսում դատարանի կողմից վճռի կատարման ժամկետ սահմանելու պահանջ, ինչը դատավարական օրենսդրության լուրջ բաց է և հաճախ հանգեցնում է պարտապանների իրավունքների էական խախտման՝ նրանց փաստացի զրկելով նյութաիրավական նորմերով երաշխավորված կատարման ժամկետից:

Առաջին գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելու էությունը և նյութաիրավական հիմքերը» վերտառությամբ, դիտարկվում են պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելու սահմանադրաիրավական և քաղաքացիաիրավական հիմքերը: Նշվում է, որ առանց յուրաքանչյուր գույքային միավորի վրա բռնագանձում տարածելը թույլատրող դատական ակտի առկայության պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելը չի հակասում ՀՀ Սահմանադրության 31 հոդվածին, և որ հարկադիր կատարման քննարկվող միջոցի կիրառումն ապահովում է պահանջատիրոջ ինչպես արդար դատաքննության, իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի, այնպես էլ սեփականության պաշտպանության իրավունքը:

Որպես բռնագանձումը պարտապանի գույքի վրա տարածելու նյութաիրավական հիմք՝ նշվում է պարտապանի գույքի նկատմամբ պարտատիրոջ ընդհանուր գրավի իրավունքը: Թեև այդ եզրույթը ՀՀ քաղաքացիական օրենսգրքին ծանոթ չէ, սակայն նշված իրավունքն արտահայտվում է օրենսգրքի այն դրույթներում, որոնք սահմանում են քաղաքացիական իրավունքի սուբյեկտների գույքային պատասխանատվությունը, ինչպես նաև թույլատրում են սեփականատիրոջ պարտավորություններով նրա գույքի վրա բռնագանձում տարածելու միջոցով դադարեցնել սեփականության իրավունքը:

Քննարկվում են նաև բռնագանձման ենթակա գույքի շրջանակի հարցերը, մասնավորապես՝ դրանում պարտավորական և իրային առանձին իրավունքներ, շրջանառությունից հանված և սահմանափակ շրջանառու գույքը ներառելու կամ չներառելու տեսանկյունից:

Երկրորդ գլուխը՝ «Պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելու բովանդակությունը. բռնագանձումը կազմող կատարողական գործողությունները» վերտառությամբ, կազմված է երկու պարագրաֆից, որոնք վերաբերում են պարտապանի գույքի բացահայտմանը և արգելադրման, արգելանքի իրավաբանական բնույթի ուսումնասիրմանը, արգելադրված գույքի իրացման և բռնագանձված գումարների բաշխման հարաբերություններին:

Երկրորդ գլխի առաջին պարագրաֆում՝ «Պարտապանի գույքի բացահայտումը և արգելադրումը. արգելանքի իրավաբանական բնույթը» վերտառությամբ, հիմնավորվում է բռնագանձումը կազմող և արգելանքին

նախորդող այնպիսի կատարողական գործողության առանձնացման անհրաժեշտության մասին, ինչպիսին է պարտապանի գույքի բացահայտումը, որն իրականացվում է հարցումների, գույքագրման և պարտապանի կողմից սեփական գույքի հայտարարագրման միջոցով: «Գույքի բացահայտում» եզրույթն առաջարկվում է հեղինակի կողմից՝ նշված գործողությունները արդեն իսկ հայտնի գույքի հայտնաբերումից տարբերակելու նպատակով: Վեր են հանվում գույքի արգելադրման պահից առաջացող այն իրային-իրավական հատկանիշները, որոնք բնորոշ են արգելադրված գույքի նկատմամբ պահանջատիրոջ իշխանությանը: Որպես արգելանքի միակ պարտադիր տարր՝ նշվում է գույքի տնօրինման արգելքը, իսկ օգտագործման և տիրապետման արգելքները՝ միայն որպես ֆակուլտատիվ տարրեր: Առաջարկվում է իրային իրավունքների նմանությամբ ամրագրել արգելանքի «հետևելու» հատկանիշը: Հիմնավորվում և առաջարկվում է, որ արգելադրված գույքի նկատմամբ ապօրինի գործողությունների համար քրեական պատասխանատվություն դրվի ոչ միայն գույքի պահառուի, այլ նաև արգելանքի մասին ծանուցված պարտապան սեփականատիրոջ վրա: Առաջարկվում է ապագայում ձեռք բերվող գույքի նկատմամբ արգելանք կիրառելու ինստիտուտի ներդրումը՝ պարտապանի գույքի վերաբերյալ հարցումներում համապատասխան պահանջ ներառելու և պարտապանի վրա ապագայում ձեռք բերվող գույքը հայտարարագրելու պարտականություն դնելու միջոցով: Քննարկվում են պարտքի չափի և արգելադրված գույքի արժեքի հարաբերակցության հարցերը. հիմնավորվում է, որ արգելադրված գույքի արժեքը պետք է որոշակի ողջամիտ չափով գերազանցի պարտքի չափը: Առաջարկվում է հայցի ապահովման կարգով արգելանք կիրառելիս պարտադիր համարել գույքի գնահատումը՝ հայցագնի և արգելադրված գույքի արժեքի համապատասխանությունն ապահովելու նպատակով:

Երկրորդ գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Արգելադրված գույքի իրացումը և բռնագանձված գումարների բաշխումը» վերտառությամբ, քննարկվում են արգելադրված գույքի գնահատման, իրացման կառուցակարգերը, բռնագանձված գումարների բաշխման կարգը և հերթականությունը: Քննադատվում է ուղղակի վաճառքի ինստիտուտը, քանի որ այն, ըստ էության իրենից ներկայացնելով փակ աճուրդ, չի կարգավորվում սակարկությունների կանոններով, ինչը սահմանափակում է շահագրգիռ անձանց իրավունքները վաճառքն անվավեր ճանաչելու հայց ներկայացնելու հարցում: Շահագրգիռ անձանց իրավունքների նույն սահմանափակումն առաջանում է նաև հարկադիր աճուրդում չիրացված գույքը պարտքի դիմաց պահանջատիրոջը հանձնելու պարագայում, ուստի առաջարկվում է վերացնել այդ ինստիտուտը՝ դրա փոխարեն միակ կամ առաջնահերթ պահանջատիրոջը հնարավորություն վերապահելով մասնակցելու աճուրդին՝ գույքի դիմաց վճարելով ոչ միայն դրամով, այլ նաև իր պահանջի հաշվանցով:

Արգելադրված գույքի գնահատման ուսումնասիրման շրջանակներում առաջարկվում է կատարողական վարույթում ներդնել լրացուցիչ և կրկնակի փորձաքննության ինստիտուտները:

Հիմնավորվում է արգելադրված գույքի իրացման հարաբերությունների քաղաքացիաիրավական բնույթը, ինչից բխեցվում են մի շարք հետևանքներ: Մասնավորապես, նշվում է, որ հարկադիր աճուրդն անվավեր ճանաչելու հայցերը ընդդաստյա են ընդհանուր իրավասության դատարանին: Ընդգծվում է, որ շահագրգիռ անձը կարող է աճուրդն անվավեր ճանաչելու հայց ներկայացնել միայն եթե աճուրդի անցկացման կանոնների խախտումը հանգեցրել է նաև իր իրավունքների խախտման: Աճուրդի անվավերության հետևանքների որոշման հարցում առաջարկվում է ելնել մինչև իրավունքի խախտումը եղած դրության վերականգնումից՝ մասնավորապես աճուրդի արդյունքում կնքված պայմանագրի, կայացված վարչական ակտերի անվավերության և բաշխված գումարների վերադարձման միջոցով: Միաժամանակ, ընդգծվում է, որ հարկադիր աճուրդին նախորդող խախտումների հիմքով աճուրդն անվավեր կարող է ճանաչվել միայն աճուրդին նախորդող և այն պայմանավորող վարչական ակտն անվավեր ճանաչվելու դեպքում՝ որպես հետևանք: Բռնագանձված գումարների բաշխման ժամանակ դատական և կատարողական ծախսերի, ինչպես նաև հարկադիր կատարման ընթացքում պարտապանի նկատմամբ նշանակված տուգանքի մարման հերթականության հարցը, ի տարբերություն գործող օրենքի, առաջարկվում է լուծել այն պահանջի հետ միևնույն հերթում, որին առնչվում են նշված ծախսերն ու տուգանքը: Ընդ որում, այդ հարցը լուծելիս սոցիալական հատուկ նշանակություն ունեցող պահանջները պետք է նախապատվություն ունենան: Կատարողական վարույթի կողմերի իրավունքների արդյունավետ պաշտպանության նկատառումներով անհրաժեշտ է համարվում նախատեսել բռնագանձված գումարների բաշխման մասին գրավոր վարչական ակտի ընդունում:

Երրորդ գլուխը՝ «Բռնագանձման առանձնահատկություններն ըստ պարտապանների» վերտառությամբ, կազմված է երկու պարագրաֆներից, որոնք նվիրված են ֆիզիկական և իրավաբանական անձանց գույքի վրա բռնագանձում տարածելու կանոնների հարաբերակցության, Հայաստանի Հանրապետությունից դրամական միջոցների բռնագանձման հիմնախնդիրների հետազոտմանը:

Երրորդ գլխի առաջին պարագրաֆում՝ «Ֆիզիկական և իրավաբանական անձանց գույքի վրա բռնագանձում տարածելու կանոնների հարաբերակցությունը» վերտառությամբ, քննարկվում են, մասնավորապես, պարտապան ֆիզիկական և իրավաբանական անձանց գույքի տարբեր տեսակների վրա բռնագանձում տարածելու հերթականության կանոնները: Նշվում է, որ պարտապանը և պահանջատերը (պահանջատերերը) պետք է

դիսպոզիտիվ հնարավորություն ունենան փոխադարձ համաձայնությամբ փոփոխելու նշված համաձայնությունը, քանի որ որևէ այլ շահ այդ դեպքում չի կարող վնասվել: Ընդգծվում է, որ գործող կարգավորումները անհամաչափորեն մեծ խոչընդոտ են պարտապան իրավաբանական անձանց գործունեության շարունակականության ապահովման տեսանկյունից: Այդ նպատակով առաջարկվում է առաջնահերթ բնագանձման ենթակա համարել պարտապան իրավաբանական անձի դրամական միջոցների միայն մի մասը, որպեսզի մնացած դրամական միջոցներով հնարավոր լինի գործունեություն իրականացնել: Եվ միայն այն դեպքում, երբ պարտապան իրավաբանական անձը չունի որևէ այլ գույք, բնագանձում կարող է տարածվել (արգելանք դրվել) իրավաբանական անձի ամբողջ դրամական միջոցների վրա: Առաջարկվում է ներդնել պարտապան իրավաբանական անձին պատկանող շրջանառության մեջ գտնվող ապրանքների արգելանքի ինստիտուտը: Նշված առաջարկները վերաբերելի են դիտվում նաև պարտապան անհատ ձեռնարկատիրոջ պարագայում: Բացի այդ, քանի որ վերջինիս գույքի մի մասն օգտագործվում է գործարարական նպատակներով, առաջարկվում է սահմանել պարտապան անհատ ձեռնարկատիրոջ գույքի վրա բնագանձում տարածելու առանձին՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց համեմատությամբ տարբերվող հերթականություն:

Երրորդ գլխի երկրորդ պարագրաֆը՝ «Հայաստանի Հանրապետությունից դրամական միջոցների բնագանձման հիմնախնդիրները» վերտառությամբ, քննարկվում են ՀՀ բյուջետային օրենսդրությամբ, կառավարության համապատասխան որոշմամբ սահմանված կարգավորումները՝ դատական ակտերի հիման վրա պետությունից դրամական միջոցների բնագանձման վերաբերյալ: Ընդգծվում է, որ պետությունը, չնայած իր հանրային-իրավական կարգավիճակին, չի կարող ենթարկվել դատական ակտերով նախատեսված դրամական պարտավորությունների կատարման այն ռեժիմին, որին ենթարկվում են մասնավոր անձինք: Սակայն, մյուս կողմից, նման հատուկ կարգը չպետք է խախտի պետության պարտատերերի իրավունքները, և վերջիններս պետք է հնարավորություն ունենան իրենց դրամական պահանջների բավարարում ստանալ այն նույն ծավալով և պայմաններով, որոնցով կստանային, եթե նրանց պարտապանները ֆիզիկական կամ իրավաբանական անձինք լինեին: Մինչդեռ, վերը նշված կարգավորումները չեն համապատասխանում այդ պահանջներին՝ մի շարք առումներով պետության համար սահմանելով պարտապան ֆիզիկական և իրավաբանական անձանց համեմատությամբ արտոնյալ պայմաններ: Որպես խնդրի լուծում՝ առաջարկվում է տարեկան պետական բյուջեի ծախսային մասի հաշվին առանձնացնել հատուկ ֆոնդ, որն ուղղված կլինի բացառապես դատական ակտերի հիման վրա պետության դրամական պարտավորությունների կատարմանը: Այդ դեպքում, բացի պահանջատերերի

պահանջների ժամանակին և ամբողջական կատարումից, հնարավորություն կատեղծվի իրավասու մարմնի անգործության դեպքում բռնազանձում տարածել այդ ֆոնդի միջոցների վրա՝ ապահովելով իրական հարկադիր կատարում՝ ի տարբերություն ներկայիս կարգավորման, երբ պետության պարտավորությունների հարկադիր կատարման կառուցակարգ պարզապես նախատեսված չէ:

Եզրակացություններում, վերաիմաստավորելով և վերաարժևորելով դատական ակտերի հարկադիր կատարման միջոցների էությանը, կիրառման պայմաններին, նյութաիրավական հիմքերին, բռնազանձումը կազմող կատարողական գործողություններին, արգելանքի իրավաբանական էությանը, արգելադրված գույքը հարկադիր իրացնելուն, իրացման ընթացքում շահագրգիռ անձանց իրավունքների պաշտպանության միջոցներին, ֆիզիկական և իրավաբանական անձանցից, Հայաստանի Հանրապետությունից դրամական միջոցների բռնազանձման առանձնահատկություններին վերաբերող հարցերը, պարտապանի գույքի վրա բռնազանձում տարածելու ոլորտում առկա տեսական և գործնական մի շարք խնդիրներ կարգավորելու նպատակով, ի լրումն պաշտպանության ներկայացվող դրույթների, կատարվել են հետևյալ հիմնական եզրահանգումներն ու առաջարկությունները.

1. Քանի որ մասնավոր իրավունքի սուբյեկտները կարող են ստեղծել ինչպես օրենքով նախատեսված, այնպես էլ չնախատեսված, բայց օրենքին չհակասող պարտավորություններ, հարկադիր կատարման միջոցներն էլ չեն կարող օրենքում սպառիչ թվարկվել: Այս առումով արդարացված չէ ԴԱՀԿ մասին ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ կետի լայն ձևակերպումը, ըստ որի՝ կարող են կիրառվել «կատարողական թերթի կատարումն ապահովող այլ միջոցներ»՝ առանց վերապահում կատարելու, որ այլ միջոցները պետք է սահմանված լինեն օրենքով կամ բխեն դատական ակտից: Ավելին, իրավական որոշակիությունը և կարգավորման ամբողջականությունն ապահովելու նպատակով նախընտրելի է հարկադիր կատարման այլ միջոցների ձևակերպումը բխեցնել պարտավորությունների ընդհանուր հասկացությունից (ՀՀ քաղ. օր., հոդված 345), այն է՝ «պարտապանի կողմից կամ նրա փոխարեն որոշակի գործողության կատարմանը կամ պարտապանին որոշակի գործողություն կատարելն արգելելուն ուղղված այլ միջոցներ, որոնք նախատեսված են օրենքով կամ բխում են դատական ակտից»:

2. Պարտապանի գույքի վրա բռնազանձում տարածելու՝ որպես հարկադիր կատարման միջոցի նախատեսումը, ի թիվս պահանջատիրոջ՝ արդար դատաքննության և իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքների, ապահովում է նաև պահանջատիրոջ սեփականության պաշտպանության սահմանադրական իրավունքը: Ուստի, խնդիրը

դիտարկելով պահանջատիրոջ նշված իրավունքների տեսանկյունից, կարող ենք եզրակացնել, որ առանց յուրաքանչյուր գույքային միավորի վրա բռնագանձում տարածելու վերաբերյալ դատական ակտի գույքի վրա բռնագանձում տարածելու թույլատրելիությունն արդարացի հավասարակշռություն է ստեղծում մի կողմից՝ պարտապանի սեփականության իրավունքի, մյուս կողմից՝ պարտատիրոջ սեփականության և իրավական պաշտպանության արդյունավետ իրավունքների ապահովման միջև: Հակառակ իրավիճակը, թեև պաշտպանելով պարտապանի սեփականության պաշտպանության իրավունքը, կիսախտեր պարտատիրոջ իրավունքները՝ նրա պահանջի իրավունքի իրականացումը դարձնելով էապես ավելի ժամանակատար, իսկ իրավական պաշտպանության միջոցը՝ ոչ արդյունավետ:

3. Չնայած ԴԱՀԿ մասին ՀՀ օրենքում առանձնացված չլինելուն՝ պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելը կազմող պարտադիր կատարողական գործողությունների շարքում ընդգրկվում է նաև պարտապանի գույքի բացահայտումը՝ պարտապանի գույքի առկայության մասին տեղեկությունների ձեռք բերումը, ինչը բոլոր դեպքերում նախորդում է արգելանքի գործողությանը: Ընդ որում, պարտապանի գույքի բացահայտման միջոցներից է նաև գույքագրումը, ինչը, սակայն, ԴԱՀԿ մասին ՀՀ օրենքում նշվում է բռնագանձումը կազմող մեկ այլ կատարողական գործողության՝ արգելանքի առաջին պարտադիր տարր:

4. Արգելադրված գույքի նկատմամբ ապօրինի գործողությունների համար քրեական պատասխանատվություն պետք է կրի ոչ միայն գույքի պահառուն, այլ նաև արգելանքի մասին ծանուցված պարտապան սեփականատերը՝ ելնելով սեփականատիրոջ վրա դրված՝ գույքի պահպանման հոգսից, պարտապանի գույքային պատասխանատվությունից, պարտատերերի ընդհանուր գրավի իրավունքից և գույքի արգելադրման պահից ծագող՝ այդ իրավունքի իրային-իրավական հատկանիշներից: Կարծում ենք, որ ՀՀ քրեական օրենսգրքի 345 հոդվածը՝ հանցագործության սուբյեկտի մասով, հարկ է խմբագրել նշված նկատառումներից ելնելով: Ասվածն առավել արդիական է արգելադրված անշարժ գույքի նկատմամբ ապօրինի գործողություններ կատարելու դեպքում (բացի պետական գրանցման ենթակա գործարքներ կնքելու), քանի որ քաղաքացիական իրավունքում անշարժ գույքի պահատվությունն ավանդաբար բացառվում է:

5. Արգելադրված գույքի արժեքի և բռնագանձման ենթակա գումարի միջև համաչափության պահանջը հնարավոր է պահպանել միայն գույքի գնահատումից հետո: Արդյունքում կարող է պարզվել, որ իրականում արգելադրվել է շատ ավելի արժեքավոր գույք, քան պարտավորության չափն է: Այդպիսի իրավիճակը չպետք է ոչ իրավաչափ համարվի, եթե, իհարկե, արգելադրումից հետո կատարողական գործողությունները արգելադրված

գույքի համապատասխան մասն արգելանքից հանելը կատարվել են ողջամիտ ժամկետներում: Սակայն հայցի ապահովման կարգով արգելանք կիրառելիս արգելադրված գույքի գնահատում չի կատարվում, քանի որ գնահատումն օրենսդրությամբ կարգավորվում է միայն գույքի իրացման շրջանակներում: Մինչդեռ հայցի ապահովման կարգով արգելանքը պետք է դրվի հայցագնի չափով, հետևաբար, անհրաժեշտ է տվյալ դեպքերում գույքի գնահատումը օրենսդրորեն սահմանել որպես պարտադիր գործողություն՝ անկախ նրանից, որ գույքի իրացում տեղի չի ունենում:

6. Պահանջատերերի շահերի պաշտպանության նպատակով առաջարկում ենք սահմանել, որ արգելադրված գույքի արժեքը կարող է որոշակիորեն գերազանցել պարտքի չափը: Մյուս կողմից, արդեն պարտապանի իրավունքների պաշտպանության նկատառումով, հարկ է սահմանել արգելադրվող գույքի արժեքի առավելագույն շեմ: Այդպիսի ողջամիտ շեմ կարող է դիտվել պարտքի չափի (և կատարողական ծախսերի) կրկնակի չափը:

7. Կատարողական վարույթի կողմերի իրավունքների պատշաճ պաշտպանություն ապահովելու նպատակով անհրաժեշտ է ներդնել կատարողական վարույթում լրացուցիչ և կրկնակի փորձաքննության, ինչպես նաև արգելադրված գույքի վերագնահատման կառուցակարգեր: Իհարկե, կատարողական վարույթն ավելորդ չճանրաբեռնելու նպատակով լրացուցիչ և կրկնակի փորձաքննությունն նշանակելու անհրաժեշտությունը պետք է բավարար չափով հիմնավորվի: Ինչ վերաբերում է հարկադիր կատարողի գնահատման հետ կողմի անհամաձայնությանը, ապա այս դեպքում կողմը պետք է հնարավորություն ունենա պահանջելու պրոֆեսիոնալ գնահատում: Ընդ որում, հաշվի առնելով գնահատման հարցում հարկադիր կատարողի ոչ պրոֆեսիոնալ լինելը, տվյալ պարագայում պրոֆեսիոնալ գնահատման անհրաժեշտության հիմնավորման պահանջը պետք է շատ ավելի մեղմ լինի՝ ըստ էության սահմանափակվելով միայն կողմի պահանջի վրա հղումով: Սակայն, կրկին կատարողական վարույթը չճանրաբեռնելու և իրավունքի չարաշահման հնարավորությունը նվազեցնելու նպատակով արդյունավետ կլինի այդ դեպքում պրոֆեսիոնալ գնահատման ծախսերը դնել այդպիսի գնահատում պահանջող կողմի վրա:

8. Արգելադրված գույքի իրացման գործընթացը քաղաքացիաիրավական հարաբերությունների համակցություն է հարկադիր կատարողի և գույքի հնարավոր գնորդների, հարկադիր կատարողի և գույքի գնորդի միջև: Համապատասխանաբար, արգելադրված գույքի վաճառքը քաղաքացիաիրավական գործարք է, որտեղ վաճառողը ոչ թե գույքի սեփականատերն է (պարտապանը), այլ հարկադիր կատարողը (հարկադիր կատարման ծառայությունը): Ըստ այդմ, հարկադիր կատարողն է կրում վաճառողին բնորոշ բոլոր իրավունքներն ու պարտականությունները:

9. Բռնագանձված գումարների բաշխման ժամանակ դատական և կատարողական ծախսերի, ինչպես նաև հարկադիր կատարման ընթացքում պարտապանի նկատմամբ նշանակված տուգանքի մարման հերթականության հարցը, ի տարբերություն գործող օրենքի, առաջարկում ենք լուծել այն պահանջի հետ միևնույն հերթում, որին առնչվում են նշված ծախսերն ու տուգանքը: Ընդ որում, այդ հարցը լուծելիս սոցիալական հատուկ նշանակություն ունեցող պահանջները պետք է նախապատվություն ունենան: Ուստի, կարծում ենք, որ տուգանքի գումարը պետք է ստորադաս լինի ոչ թե պարտապանի բոլոր պարտավորությունների նկատմամբ, այլ այն պարտավորության նկատմամբ, որի կատարման ընթացքում նշանակվել է տուգանքը:

10. Կատարողական վարույթի կողմերի իրավունքների արդյունավետ պաշտպանության նկատառումներով անհրաժեշտ է նախատեսել բռնագանձված գումարների բաշխման մասին գրավոր վարչական ակտի ընդունում:

11. Պարտապանի գույքի տարբեր տեսակների վրա բռնագանձում տարածելու հերթականությունն օրենքով սահմանելն առավել արդարացի է և սահմանափակում է պարտապանի անբարեխիղճ ազդեցությունը կատարման ընթացքի վրա: Սակայն բռնագանձման հերթականությունը փոխելն այն հարցերից է, որտեղ պետք է, դիսպոզիտիվության սկզբունքից ելնելով, առաջնություն տալ կողմերի համատեղ հայեցողությանը, քանի որ որևէ այլ սուբյեկտ նյութաիրավական շահ չունի այդ հարցում: Չկա որևէ այլ, այդ թվում՝ հանրային շահ, որի պաշտպանության նկատառումներով կարելի է արգելել կողմերի համաձայնության վրա հիմնված համատեղ միջնորդությամբ բռնագանձման հերթականությունը փոփոխելը: Ուստի, առաջարկում ենք ԴԱՀԿ մասին ՀՀ օրենքի 43 հոդվածը լրացնել դրույթով, որը կնախատեսի պարտապանի և պահանջատիրոջ համաձայնությամբ բռնագանձման հերթականությունը փոխելու հնարավորությունը:

12. Իրավաբանական անձանց գույքի վրա բռնագանձում տարածելու գործող հերթականության պարագայում արտադրության մեջ անմիջականորեն չներգրավված ոչ հիմնական միջոցները դասվում են վերջին հերթում (այլ գույք)՝ իրավաբանական անձի գործունեության համար կարևոր այնպիսի գույքից հետո, ինչպիսիք են հումքը, նյութերը, կիսաֆաբրիկատները, ինչը հակասում է իրավաբանական անձի գործունեության շարունակականության նպատակից բխող կարգավորման տրամաբանությանը: Ուստի, արտադրության մեջ չներգրավված բոլոր միջոցները պետք է լինեն արտադրության մեջ ներգրավված միջոցների համեմատ առաջնահերթ բռնագանձման ենթակա: Իր հերթին, արդարացված կլինի այդ հերթը ևս դետալացնել բռնագանձման ենթակա համարել արտադրության մեջ չներգրավված սկզբում՝ շարժական, ապա՝ անշարժ գույքը:

Ատենախոսության հիմնական դրույթները արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում

1. Հայաստանի Հանրապետությունից դրամական միջոցների բռնագանձման հիմնախնդիրները // ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2013թ. նստաշրջանի նյութերի ժողովածու / ԵՊՀ, իրավագիտության ֆակուլտետ, Եր., ԵՊՀ հրատ., 2014, էջեր 137-155,
2. Դատական ակտի հարկադիր կատարման շրջանակներում պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելու նյութաիրավական հիմքերը // Կանթեղ, Եր., 2014, N 1 (58), էջեր 203-210,
3. Կատարողական վարույթում արգելադրված գույքի իրացման որոշ հարցեր // Պետություն և իրավունք, Եր., 2014, N 1 (63), էջեր 114-123,
4. Դատական ակտի հարկադիր կատարման նպատակով պարտապանի նկատմամբ կիրառվող հարկադրանքի թույլատրելի միջոցների շրջանակը // Հանրային կառավարում, հատուկ թողարկում, գիտաժողովի նյութեր, Եր., 2014 N 3-4, էջեր 84-92:

Резюме
Даллакян Ваагн Николаевич

**ОБРАЩЕНИЕ ВЗЫСКАНИЯ НА ИМУЩЕСТВО ДОЛЖНИКА, КАК МЕРА
ПРИНУДИТЕЛЬНОГО ИСПОЛНЕНИЯ СУДЕБНЫХ АКТОВ**

Несмотря на системное значение принудительного исполнения судебных актов в цепочке защиты субъективных прав, после принятия в 1998 г. закона РА “О принудительном исполнении судебных актов” эта сфера в Армении по большому счету выпала из внимания как теоретических исследований, так и законодательной политики. Особо актуальны проблемы принудительного исполнения судебных актов о взыскании денежных средств, которым и посвящена настоящая работа. Основные результаты исследований диссертации следующие:

Отмечается, что мерами принудительного исполнения судебных актов являются только те меры правового воздействия на должника и (или) на его имущество, которые вытекают из материально-правового обязательства и непосредственно направлены исключительно на исполнение обязательства. В этом контексте неправомерными считаются меры принуждения, понуждающие должника самостоятельно выполнить обязательство посредством причинения ему некоторых лишений. Предлагается возложить на суд обязательство установить срок выполнения решения суда, только по истечении которого будет разрешено возбуждение исполнительного производства.

В качестве материально-правовой основы обращения взыскания на имущество должника, указывается право общего залога кредитора в отношении всего имущества должника. Это право по сути отражено в положениях, устанавливающих имущественную ответственность субъектов гражданского права, а также допускающих прекращение права собственности посредством обращения взыскания на имущество собственника по его обязательствам. Отмечается, что с момента наложения ареста на имущество власть кредитора в отношении этого имущества приобретает определенные вещно-правовые свойства, исходя из чего предлагается установить, что в случае незаконного отчуждения арестованного имущества арест сохраняется, а имущество может быть изъято и принудительно реализовано. Предлагается также законодательно закрепить возможность применения ареста в отношении приобретаемого в будущем имущества.

Предлагается урегулировать процедуру прямой продажи, представляющей собой по сути закрытый аукцион, по правилам закрытых торгов, чтобы заинтересованные лица в случае продажи, осуществленной с нарушением

закона, имели доступ на средство защиты своих прав, в частности посредством предъявления иска о признании закрытого аукциона недействительным. Из тех же соображений предлагается устранить институт передачи взыскателю лота за долг после несостоявшегося публичного аукциона – вместо этого оставляя за единственным или приоритетным взыскателем право на участие в аукционе, платя за имущество не только деньгами, но и зачетом своего требования. Даются основания и следствия недействительности принудительного аукциона. В частности, основанием недействительности считаются только такие нарушения правил аукциона, которые привели к нарушению прав истца. А на основании предшествующих аукциону нарушений аукцион может быть признан недействительным только в случае признания недействительным предшествующего аукциону и обуславливающего его административного акта по правилам оспаривания административных актов – в качестве следствия подобной недействительности. В вопросе последствий недействительности аукциона предлагается применять способ восстановления существовавшего до нарушения права положения, в частности посредством недействительности последовавшего за аукционом договора и административных актов, а также возвращения распределенных денежных средств.

С целью по возможности меньшего препятствования деятельности юридических лиц – должников предлагается внедрить институт ареста товаров, находящихся в обращении, а также вместо первоочередного полного обращения взыскания на денежные средства юридического лица в первую очередь обращать взыскание на только определенный процент денежных средств, обращая взыскание на остальную часть только в случае недостаточности иного имущества. Предлагается также установить особую очередность обращения взыскания на виды имущества должника – индивидуального предпринимателя.

Касательно взыскания денежных средств с Республики Армения выделяются положения, нарушающие права кредиторов, и предлагается в расходной части государственного бюджета выделить фонд направленный исключительно на выполнение обязанностей государства по судебным актам. Такой фонд, помимо своевременного и полного выполнения обязательства, в случае необходимости позволит также применить меры принудительного исполнения.

Основные положения диссертации нашли свое отражение в опубликованных автором научных статьях и были обсуждены на кафедре гражданского процесса Ереванского государственного университета.

Summary

Vahagn Kolya Dallakyan

FORECLOSURE OF THE DEBTOR'S PROPERTY AS A MEASURE OF COMPULSORY ENFORCEMENT OF JUDICIAL ACTS

Despite the systemic importance of enforcing judicial acts in the chain of protection of subjective rights since the adoption of the RA Law on "Compulsory Execution of Judicial Acts" in 1998, this topic largely dropped out of the spotlight of theoretical research in Armenia, as well as of the legislative policy. In the context of the economic reforms, the most urgent issues pertain to the compulsory enforcement of judicial acts of material nature, particularly to the monetary judgements, which is the focus of the present work. The main results of this thesis are as follows.

The measures of compulsory enforcement of judicial acts are set as means arising out of material-legal obligations and are directed merely at the performance of an obligation. In that context, the means of coercion, which are not directed immediately at the execution of the obligation, are considered illegal as they force the debtor to perform the obligation through depriving him of certain rights. The expiration of the terms of performance of the obligation is specified as a prerequisite for the enforcement of all measures. It is proposed – to fill the legislative gap by amending the procedural law – that courts set a deadline for the debtor to perform its obligation under the judicial act. Only in the event of failure to meet said deadline shall the enforcement process be initiated.

As a substantive basis for seizing the debtor's property as a measure of compulsory enforcement, the creditor's right of common pledge in respect to the debtor's whole property is mentioned. Although this right is unknown to civil legislation of Armenia, its content is reflected in the clauses providing for the pecuniary liability of civil right subjects, as well as in the clauses allowing the termination of property right through foreclosure of the owner's property. It is noted that from the moment of arresting the debtor's property, the creditor's power towards the property under arrest acquires certain substantive legal features, based on which it is proposed to fix in the law that in the event of illegal alienation of property under arrest, the arrest is preserved, and the arrested property can be seized and forcefully alienated. It is also proposed that the law provides for the possibility of putting arrest on the property acquired in the future.

It is also advised to regulate the procedure of direct sale, which is in fact a close auction, in accordance with the rules of close auctions, in order to ensure the protection

of the rights of stakeholders in case the sale was performed in violation of law, particularly through claiming to proclaim the closed auction invalid.

In view of these observations, it is suggested to reject the concept of passing the lot to creditors for the debt after the public auction fails to be conducted. Instead the sole or the priority creditor shall be given the right to participate in the auction, paying for the property not only in cash, but also by way of setting off his claim.

The grounds and consequences of the invalidity of compulsory auction are discussed. In particular, only the violations of those rules of the auction, which led to the breach of plaintiff's rights, are considered as ground for invalidity. The invalidity of the auction based on the violations preceding the latter can be proclaimed as a consequence and in accordance with the rules of the invalidity of an administrative act, which preceded the auction and which that auction was contingent upon. As a consequence of the invalidity of the action, it is recommended to apply a measure in order to recover the state existing before the violation of the right, particularly through proclaiming invalid the agreements and administrative acts following and through restitution of the distributed assets.

With the aim of minimizing interventions in the activity of debtor entities, it is proposed to introduce the concept of arresting the goods in circulation, as well as banning the comprehensive arrest on the cash of the legal entity, primarily putting arrest only on a certain percentage of funds, and arresting the rest only in the event of insufficiency of other property. It is also suggested to establish a special order of seizing the types of private entrepreneur's property.

In the order of seizing the monetary funds of the Republic of Armenia, provisions violating creditors' rights are revealed. It is recommended to allocate a fund in the expenditures section of the yearly state budget, which will be exclusively directed at the performance of the state's obligations based on judiciary acts. This sort of a fund will also allow to undertake the enforcement measures in case of the state's failure to fulfill its obligations.

The fundamental standpoints of the thesis have been reflected in the scientific articles published by the author and were discussed at the meetings of the Chair of Civil Procedure of Yerevan State University.